Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան

«ԳՏԻՐ ԶՈՒՅԳԸ»

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ԽԱՂ

Նպատակ

Զարգացնել ուշադրության կենտրոնացումն ու պահպանումը, տրամաբանությունը, ընդլայնել բառապաշարը: Նպաստել տարբեր առարկաների, դրանց առանձին հատկանիշների ճանաչողությանը, դրանց տրամաբանական ընդհանրությունները գտնելու ունակությունների ձևավորմանը:

Անհրաժեշտ նյութեր

Նկար-քարտեր, որոնց վրա պատկերված են տարբեր առարկաներ, կենդանիներ, թռչուններ և այլն:

Տարիքային խումբ

5 և ավելի բարձր տարիքի երեխաներ:

Ընթացք

Մասնագետը երեխային տրամադրում է նկար-քարտը, ծանոթացնում կամ հիշեցնում բոլոր պատկերների անվանումները: Այնուհետև նրան տրվում է առաջադրանք՝ գտնել պատկերների համապատասխան տրամաբանական զույգերը: Եթե երեխան դժվարանում է կատարել առաջադրանքը, մասնագետը բացատրում է, թե ինչ սկզբունքով են պատկերները կապված միմյանց հետ: Երեխան մատիտի օգնությամբ զույգերը միացնում է միմյանց:

Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան

Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան

Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան

Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան

Հեղինակ՝ Լյուդմիլա Գարեգինյան